



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2012թ. երրորդ եռամսյակում /վերլուծություն/

2012թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 42789 գործարքներ, որոնց քանակը 2012թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 2.7%-ով, իսկ 2011թ. երրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 4.7%-ով:

2012թ. երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2012թ. երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2012թ. երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 12286 օտարման գործարքների 74.3%-ը կազմել են առուվաճառքները, 25.1%-ը՝

նվիրատվությունները և 0.6%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 39.1%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 37.7%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2012թ. երրորդ եռամսյակում, 2012թ. երկրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 14.7%-ով, իսկ 2011թ. երրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 2.7%-ով:

2012թ. երրորդ եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 57.2%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2012թ. երրորդ եռամսյակում, 2012թ. երկրորդ եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը ել է 6.7%-ով, իսկ 2011թ. երրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 9.7%-ով:

2012թ. երրորդ եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	Երրորդ եռամսյակ 2011թ.	Երրորդ եռամսյակ 2012թ.	Երկրորդ եռամսյակ 2012թ.
Կենտրոն	438200	416700	410300
Արաբկիր	340100	344200	338700
Քանաքեռ-Զեյթուն	263700	272300	265800
Նոր-Նորք	225000	234700	227900
Ավան	246100	244900	238000
Էրեբունի	235500	239300	235700
Շենգավիթ	225300	240900	234600
Դավթաշեն	258300	264800	259800
Աջափնյակ	222900	231700	227000
Մալաթիա-Սեբաստիա	225900	229800	225200
Նուբարաշեն	145300	140600	140200
Միջինը Երևանում	256900	260000	254800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2012թ. երրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2012թ. երկրորդ եռամսյակի համեմատ, աճել են 2.0%-ով:

2012թ. երրորդ եռամսյակում մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 1179 բնակարաններ, որոնց քանակը, 2012թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 29.3 %-ով, իսկ 2011թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 4.8%-ով:

2012թ. երրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		Երրորդ եռամսյակ 2011թ.	Երրորդ եռամսյակ 2012թ.	Երկրորդ եռամսյակ 2012թ.
Արագածոտն	Աշտարակ	127100	113000	111400
	Ապարան	53200	49400	48600
	Թալին	63500	61100	61000
Արարատ	Արտաշատ	99300	92600	91600
	Մասիս	112600	109400	107700
	Վեդի	93500	97100	96200
	Արարատ	80800	74100	73200
Արմավիր	Վաղարշապատ	139400	153200	152500
	Արմավիր	116000	118400	117600
	Մեծամոր	79900	86300	86100
Գեղարքունիք	Սևան	90600	99000	97700
	Գավառ	53400	53600	52100
	Մարտունի	93200	106300	103200
	Վարդենիս	35900	37400	33900
	Ճամբարակ	24500	22700	21100
Լոռի	Վանաձոր	89800	87100	86300
	Ստեփանավան	72400	74200	72500
	Սպիտակ	93500	99800	99500
	Ալավերդի	35600	51600	50000
	Տաշիր	46300	43400	40700
	Թումանյան	13000	11000	11000
	Շամլուղ	9000	8000	8000
	Ախթալա	21200	19600	19500
Կոտայք	Աբովյան	139000	153000	152300
	Նոր Հաճն	121700	128300	128000
	Բյուրեղավան	105500	107100	107000
	Եղվարդ	109300	108800	108300
	Հրազդան	60100	60100	59000
	Ծաղկաձոր	190800	292500	292300
	Չարենցավան	73200	84000	83400
Շիրակ	Գյումրի	106200	108900	108300
	Արթիկ	64800	64500	64200
	Մարալիկ	35700	37000	35600
Սյունիք	Գորիս	122100	115100	114700
	Կապան	99500	90100	89100
	Սիսիան	90200	82800	79800
	Մեղրի	73200	69700	65700
	Ագարակ	42400	43300	40500
	Քաջարան	70700	94200	94100
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	81400	86200	83500
	Եղեգնաձոր	109400	117600	116200
	Ջերմուկ	118400	103500	100600
Տավուշ	Դիլիջան	105900	104700	103200
	Իջևան	122700	114000	111600
	Բերդ	50900	52000	49200
	Նոյեմբերյան	42200	42600	41300

	Այրում	30300	24800	24500
--	--------	-------	-------	-------

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, 2012թ. երրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2012թ. երկրորդ եռամսյակի համեմատ, աճել են 1.5%-ով:

2012թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 1129 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 348, մարզերում միասին վերցրած՝ 781: 2012թ. երկրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն նվազել է 1.7%-ով, ընդ որում, Երևանում՝ 1.4%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 1.8%-ով: 2011թ. երրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 16.7%-ով, ընդ որում Երևանում՝ 2.2%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 21.8%-ով:

2012թ. երրորդ եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	Երրորդ եռամսյակ 2011թ.	Երրորդ եռամսյակ 2012թ.	Երկրորդ եռամսյակ 2012թ.
Կենտրոն	454900	465033	460900
Արաբկիր	367000	371533	366600
Քանաքեռ Զեյթուն	272300	282200	278000
Նորք Մարաշ	290200	308600	304500
Ավան	249400	261900	257800
Էրեբունի	241600	229367	227100
Շենգավիթ	235800	246433	243100
Դավթաշեն	271900	264633	261600
Աջափնյակ	235600	240200	237500
Մալաթիա Սեբաստիա	234300	229267	225400
Նուբարաշեն	150100	144500	144500
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	273000	276700	273400

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2012թ. երրորդ եռամսյակում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2012թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 1.2% :

2012թ. երրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		Երրորդ եռամսյակ 2011թ.	Երրորդ եռամսյակ 2012թ.	Երկրորդ եռամսյակ 2012թ.
Արագածոտն	Աշտարակ	131400	134100	131900
	Ապարան	55000	53400	52100
	Թալին	64600	68700	68600
Արարատ	Արտաշատ	106000	98400	97900
	Մասիս	116900	111700	110700
	Վեդի	96700	100200	100000
	Արարատ	85200	87300	87100
Արմավիր	Վաղարշապատ	160200	152200	150800
	Արմավիր	119400	104500	103200
Գեղարքունիք	Սևան	94500	94100	92200
	Գավառ	55100	52200	51600
	Մարտունի	94000	93400	91100
	Վարդենիս	39400	34000	34000
	Ճամբարակ	27400	26000	25900
Լոռի	Վանաձոր	98300	98100	96100
	Ստեփանավան	75100	87600	87100
	Սպիտակ	102000	113500	112500
	Ալավերդի	36800	46400	46500
	Տաշիր	50000	50500	50100
	Թումանյան	13600	12000	12000
	Շամլուղ	10500	13200	13200
	Ախթալա	22400	29500	29400
Կոտայք	Աբովյան	146000	154300	151800
	Նոր Հաճն	129400	129800	128900
	Բյուրեղավան	107200	120000	119900
	Եղվարդ	115200	115600	114900
	Հրազդան	63900	79300	78200
	Ծաղկաձոր	313000	305000	304500
	Զարենցավան	75500	82200	81300
Շիրակ	Գյումրի	117500	117300	116300
	Արթիկ	67400	61100	61000
	Մարալիկ	37700	49200	48000
Սյունիք	Գորիս	130600	127000	126900
	Կապան	102400	98300	97900
	Սիսիան	93100	89700	88600
	Մեղրի	74200	76500	74800
	Ագարակ	44100	46200	45900
	Դաստակերտ	10500	11600	11600
Վայոց ձոր	Վայք	83800	84100	82300
	Եղեգնաձոր	117500	112800	111200
	Զերնուկ	121700	122300	120000
Տավուշ	Դիլիջան	109700	108300	104800
	Իջևան	132000	121400	119900
	Բերդ	53300	57800	57700
	Նոյեմբերյան	44800	46100	45900
	Այրում	31700	34400	34200

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. երրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2012թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել են 1.0 %-ով:

Ընդհանուր առմամբ, 2012թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում օտարվել են 4019 միավոր /1949.73 հա/ հողեր, որից Երևանում՝ 386 միավոր /99.15 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 2062 միավոր /1691.48 հա/, որից Երևանում՝ 14 միավոր /2.30 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 1324 միավոր /111.64 հա/, որից Երևանում՝ 222 միավոր /13.94 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 547 միավոր /102.04 հա/, որից Երևանում՝ 147 միավոր /82.81 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 34 միավոր /13.29 հա/, որից Երևանում՝ 3 միավոր /0.09 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 32 միավոր /5.91 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 19 միավոր /2.04 հա/ ընդհանուր մակերեսով,
- ջրային հողեր՝ 1 միավոր /23.31 հա/:

2012թ. երրորդ եռամսյակում օտարված հողերից 3379 միավորի /1681.55 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 253 միավոր /89.18 հա/, նվիրատվության գործարքներ՝ 609 միավորի /265.78 հա/, որից Երևանում՝ 132 միավոր /9.96 հա/ և փոխանակության գործարքներ՝ 31 միավորի /2.40 հա/, որից Երևանում՝ 1 միավոր /0.01 հա/:

Հանրապետությունում 2012թ. երրորդ եռամսյակում 2011թ. երրորդ եռամսյակի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 1.9%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 3.8%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 5.5%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 19.0%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 312.62 հա, որից 290.35 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 23.4%-ը կամ 790 գործարքներ /272.60 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 72 միավոր /12.17 հա/, իսկ 75.8%-ը կամ 2562 միավորը /1307.58 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 178 միավոր /76.31 հա/: 2012թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 27 գործարք /101.37 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2012թ. երրորդ եռամսյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների,

հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	1	0.01	8	0.48	63	11.68	9	1.07	2	0.08	107	6.75	60	68.41
Արագածոտն	38	25.06	0	0.00	2	0.19	14	1.99	137	223.15	1	0.14	86	9.13	5	0.08
Արարատ	31	33.10	3	0.26	9	0.49	15	0.65	219	164.09	1	2.00	123	10.00	13	0.52
Արմավիր	17	37.53	2	0.02	4	0.46	28	0.50	189	252.82	1	2.31	165	18.89	4	0.06
Գեղարքունիք	5	1.10	1	0.49	32	3.33	15	2.97	593	213.07	0	0.00	19	2.34	4	0.23
Լոռի	8	1.39	4	0.64	15	0.40	33	1.59	45	27.91	0	0.00	30	2.62	11	0.13
Կոտայք	60	80.28	5	0.94	108	6.54	81	2.08	221	141.36	3	0.53	233	18.52	38	1.74
Շիրակ	2	1.92	1	1.14	14	0.37	30	0.70	72	67.31	0	0.00	10	0.79	8	0.55
Սյունիք	6	36.66	1	4.04	8	0.48	19	0.83	35	39.64	2	0.27	9	1.17	4	0.16
Վայոց Ձոր	6	1.21	2	0.12	8	0.44	17	0.34	27	10.68	0	0.00	18	1.63	7	0.13
Տավուշ	8	1.88	4	0.30	11	1.34	14	0.56	21	13.67	0	0.00	15	1.73	6	0.93
Ընդամենը	181	220.13	24	7.96	219	14.52	329	23.89	1568	1154.77	10	5.33	815	73.57	160	72.94

Ստորև ներկայացվում է 2012թ. երրորդ եռամսյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Գյուղ. նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. /տնամերձ / հողերի		հասարակական կառուցապատ. հողերի								բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	35	7.44	1	0.01	1	0.05	33	7.38	37	4.73	0	0.00	0	0.00	7	0.43	30	4.30
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	54	27.24	38	25.06	0	0.00	2	0.19	14	1.99
Արարատ	1	0.01	0	0.00	1	0.01	0	0.00	52	33.48	26	32.10	3	0.26	8	0.47	15	0.65
Արմավիր	11	0.24	0	0.00	2	0.17	9	0.07	36	10.22	13	9.49	2	0.02	2	0.28	19	0.43
Գեղարքունիք	2	0.012	0	0.00	1	0.01	1	0.002	51	7.88	5	1.10	1	0.49	31	3.32	14	2.97
Լոռի	15	0.53	1	0.27	2	0.01	12	0.25	45	3.50	8	1.39	3	0.37	13	0.40	21	1.34
Կոտայք	13	0.29	0	0.00	5	0.17	8	0.12	235	81.54	54	72.28	5	0.94	103	6.37	73	1.95
Շիրակ	21	0.38	0	0.00	5	0.10	16	0.28	26	3.75	2	1.92	1	1.14	9	0.27	14	0.42
Սյունիք	10	4.71	1	4.04	3	0.18	6	0.49	22	34.95	4	34.32	0	0.00	5	0.30	13	0.33
Վայոց Ձոր	4	0.01	0	0.00	0	0.00	4	0.01	28	2.03	5	1.14	2	0.12	8	0.44	13	0.33
Տավուշ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	37	4.08	8	1.88	4	0.30	11	1.34	14	0.56
Ընդամենը	112	13.62	3	4.32	20	0.70	89	8.60	623	213.40	163	180.68	21	3.64	199	13.81	240	15.27

2012թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 18 գործարք /39.44 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2012թ. երրորդ եռամսյակում, 2011թ. երրորդ եռամսյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 5.1%-ով Ընդ որում, Երևանում աճել է 5.3 անգամ, իսկ մարզերում միասին վերցրած նվազել է 9.7%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 19.0%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել է 22.3%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ աճել է 18.8%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 22.2%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2012թ. երրորդ եռամսյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատավճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	34	20.62	74.3	1100.3	467.0	89	41.19	365.0	12000.0	3823.3
Ապարան	2	0.28	1218.2	2730.0	1974.1	9	2.70	86.5	2727.3	703.3
Թալին	2	4.16	38.2	48.5	43.4	20	152.93	93.6	5494.5	616.8
Ծաղկահովիտ						14	24.86	79.5	1000.0	245.4
Արարատի մարզ										
Արտաշատ	5	3.72	73.7	4272.7	2175.7	99	45.11	335.1	10833.3	2773.9
Մասիս	15	25.87	63.4	2997.5	582.0	65	69.50	200.0	11904.8	3077.7
Վեդի	6	2.51	84.7	1044.8	458.8	52	48.29	207.0	10795.1	1887.0
Արմավիրի մարզ										
Արմավիր	7	4.90	75.2	1059.3	522.4	112	89.16	294.3	9090.0	1538.5
Բաղրամյան						15	93.34	90.6	2561.1	745.8
Վաղարշապատ	6	4.59	39.6	234.4	160.7	61	70.10	444.4	11764.7	2606.8
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	1	0.15	121.9	121.9	121.9	556	179.79	199.8	1875.0	402.8
Ճամբարակ						16	9.41	60.5	953.3	339.2
Մարտունի	2	0.35	265.7	610.4	438.0	3	1.70	51.1	2850.0	731.9
Սևան	2	0.60	1221.0	1221.0	1221.0	6	3.41	52.2	2134.8	317.4
Վարդենիս						12	18.76	41.2	2575.1	389.6
Լոռու մարզ										
Ալավերդի	2	0.20	187.0	1095.7	641.4	12	5.14	170.4	6424.2	648.9
Գուգարք	3	0.36	506.0	1439.2	926.6	5	0.85	234.6	6065.9	751.3
Սպիտակ	2	0.23	650.0	6441.1	3545.6	10	1.84	250.0	5555.5	729.5
Ստեփանավան	1	0.61	1119.3	1119.3	1119.3	7	4.82	90.6	1686.6	300.0
Տաշիր						8	12.63	45.3	1384.4	144.6
Կոտայքի մարզ										

Արվյան	18	9.06	67.5	8423.8	927.7	79	50.31	279.3	11942.7	4670.6
Եղվարդ	28	52.67	71.6	4721.8	1068.3	100	63.02	174.4	11971.8	2704.7
Հրազդան	8	10.56	118.3	698.6	350.0	40	26.59	130.5	10256.4	1842.7
Շիրակի մարզ										
Ախուրյան	2	1.92	259.4	295.3	277.4	28	19.26	252.0	1693.1	595.2
Ամասիա						4	7.15	40.9	261.0	128.5
Անի						16	22.50	110.6	546.9	370.7
Աշոցք						7	4.45	58.5	215.8	124.5
Արթիկ						12	9.59	79.4	1428.6	385.2
Սյունիքի մարզ										
Գորիս	1	3.24	59.4	59.4	59.4	11	20.65	92.6	1023.2	698.4
Կապան	1	29.80	137.5	137.5	137.5	3	1.34	120.0	841.6	347.3
Մեղրի	2	1.28	242.2	472.2	357.4	3	0.64	193.0	3000.0	725.5
Սիսիան						16	13.40	46.3	1977.4	514.3
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	5	1.14	44.6	1600.0	428.0	15	6.76	125.0	10000.0	1873.3
Վայք						11	3.82	58.8	1430.7	612.6
Տավուշի մարզ										
Բերդ	1	0.03	500.0	500.0	500.0	9	1.31	213.3	3783.8	675.3
Իջևան	7	1.85	279.5	1684.4	587.9	5	7.84	267.5	9454.5	1235.5
Նոյեմբերյան						7	4.52	46.7	7368.4	849.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2012թ. երրորդ եռամսյակում բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված է են հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Մտավելագույն	Միջին			Նվազագույն	Մտավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	1	190.0	2819.7	2819.7	2819.7	71	70659.0	130.7	22200.0	2572.2
Ապարան	1	1744.0	378.4	378.4	378.4	10	12530.0	124.1	609.6	380.0
Թային						3	3960.0	63.2	1454.8	152.4
Ծաղկահովիտ						1	2970.0	60.0	214.3	87.0
Արարատի մարզ										
Արտաշատ	3	2544.0	146.3	847.8	453.7	33	31398.4	173.9	7140.3	893.2
Մասիս	4	1580.0	832.7	1262.0	1050.8	70	45301.3	187.5	25000.0	1205.9
Վեդի	1	600.0	646.0	646.0	646.0	18	21520.0	126.1	5000.0	660.5
Արմավիրի մարզ										
Արմավիր	1	842.0	356.3	356.3	356.3	62	70782.8	131.6	9090.9	1215.1
Բաղրամյան						5	6300.0	100.0	833.3	237.5
Վաղարշապատ	1	2000.0	57.5	57.5	57.5	95	105570.4	197.4	26528.4	1526.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	11	12480.0	114.1	123.1	116.1	2	1150.0	186.6	1084.3	664.0
Ճամբարակ						1	342.0	71.3	2286.2	148.1
Մարտունի	15	17470.0	219.8	219.8	219.8	10	11973.0	119.3	5000.0	278.8
Սևան						3	4330.0	240.0	3110.4	306.7
Վարդենիս	5	3217.8	67.5	1150.0	602.5	3	5632.0	72.5	987.2	150.0

Լոռու մարզ										
Այավերդի						2	2110.0	114.3	1388.9	216.1
Գուգարք	7	653.7	1148.8	4976.4	3509.2	18	14689.0	77.9	14083.3	1107.7
Սպիտակ	2	2806.5	244.7	245.2	245.0	8	7781.5	104.9	1348.3	204.7
Ստեփանավան	1	370.0	554.4	554.4	554.4	1	600.0	88.2	1666.7	175.5
Տաշիր	3	134.0	351.9	410.0	387.3	1	1000.0	45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	66	34551.5	410.0	5648.9	3144.2	121	88098.2	264.5	35353.5	1962.2
Եղվարդ	37	29171.0	445.5	3981.1	2127.9	92	79355.8	173.6	27000.0	2850.9
Հրազդան						19	17254.4	117.7	34848.5	1320.5
Շիրակի մարզ										
Ախուրյան	6	1823.4	557.2	4400.0	2130.3	5	3235.2	113.6	18750.0	331.6
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի	2	800.0	402.1	467.4	434.8			67.9	180.6	160.0
Աշոցք								40.8	144.0	63.2
Արթիկ	1	28.0	3267.9	3267.9	3267.9	5	4707.6	111.8	5000.0	216.5
Սյունիքի մարզ										
Գորիս						6	7602.6	112.2	1700.0	367.6
Կապան	2	682.0	198.1	1787.1	992.6			67.9	2638.9	300.0
Մեղրի	3	2278.3	269.4	670.5	406.3	3	4110.0	68.5	632.9	195.3
Սիսիան								123.5	875.0	197.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	2	800.1	754.8	1492.5	1123.7	15	12206.0	96.7	7659.6	500.0
Վայք	6	3571.6	858.0	872.0	864.6	3	4075.0	120.7	1448.3	200.0
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	111.0
Իջևան	8	13316.4	258.0	3000.0	2087.7	15	17307.7	74.1	14423.1	514.5
Նոյեմբերյան	3	111.6	1650.2	1656.0	1652.0			125.0	1948.1	221.0

2012թ. երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2159 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 5.1%:

2012թ. երրորդ եռամսյակում, 2012թ. երկրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 4.0%-ով, իսկ 2011թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 16.0%-ով:

2012թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 114 բնակարանների, 219 անհատական բնակելի տների, 867 հասարակական նշանակության, 271 արտադրական նշանակության օբյեկտների, 628 միավոր /4324.84 հա/ հողերի, 10 այգետնակների և 50 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2012թ. երրորդ եռամսյակում Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 20 վարձակալության գործարքների, այդ թվում 8 միավոր /2.28 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2012թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել է 66.7%-ով, իսկ 2011թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 33.3%-ով:

2012թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում վարձակալված 4324.84 հա հողերից 6.16 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 4318.67 հա հողերից 78.29 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 2.42 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Վայոց Ձորի մարզում՝ 3434.81 հա,

որից 3432.04 հա գյուղատնտեսական նշանակության: 2012թ. երրորդ եռամսյակում հանրապետության մարզերում վարձակալվել են 4214.24 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

2012թ. երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 5528 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 12.9%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2012թ. երկրորդ եռամսյակի համեմատ, նվազել է 8.4%-ով, իսկ 2011թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 10.2%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /52.3%/, առանձնատների /23.5%/, հասարակական նշանակության օբյեկտների /11.6%/ և հողերի /6.7%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2946 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2012թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել է 7.4%-ով, իսկ 2011թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 1.3%-ով:

2012թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում գրավադրվել են 734.52 հա հողեր, որից 132.84 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 77.5%-ը կամ 569.59 հա գյուղատնտեսական նշանակության են, որից 0.36 հա՝ Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 360.67 հա, որից 356.15 հա գյուղատնտեսական նշանակության:

2012թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 437 գործարքներ, որից 278-ը՝ Երևանում: 2012թ. երկրորդ եռամսյակի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը նվազել է 2.9%-ով, ընդ որում Երևանում աճել՝ 4.9%-ով, մարզերում միասին վերցրած նվազել՝ 14.1%-ով, իսկ 2011թ. երրորդ եռամսյակի համեմատ նվազել է 25.2%-ով, ընդ որում Երևանում՝ 34.7%-ով, մարզերում միասին վերցրած աճել՝ 0.6%-ով:

2012թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում ապապետականացման միջոցով մասնավորեցման գործարքներ չեն արձանագրվել:

2012թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 5961 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը, 2012թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 16.0%-ով, իսկ 2011թ. երրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 19.7%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 13.9%: Առաջնային գրանցումների քանակի բարձր սոկոսաչափն արձանագրվել է Երևանում /27.7%/:

« Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե